

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 36/4

15 սեպտեմբերի 2015 թ.

Քննարկվեց Ա/Ձ Դավիթ Առաքելյանի 13.08.2015 թ-ի դիմում-գանգատը ՀՀ ՖՆ Նոր Նորքի ՀՏ 23.06.2015 թ-ի թիվ 5103808 ակտի դեմ:

Ա/Ձ Դավիթ Առաքելյանի գանգատում բերված փաստարկները.

Նոր Նորքի ՀՏ աշխատակիցների կողմից 23.06.2015 թ-ին կազմված թիվ 5103808 ակտի հետ Ա/Ձ Դավիթ Առաքելյանը համաձայն չէ, քանի որ ակտի մեջ նշված 105 ք.մ. սպասարկման մակերեսով տարածք Ա/Ձ Դավիթ Առաքելյանի կողմից երբևէ չի օգտագործվել հանրային սննդի կազմակերպման գործունեության համար, ինչպես նաև հարկային տեսուչները որևէ կերպ չեն հիմնավորել, թե ակտում նշված 105 ք.մ. ինչպես է հաշվարկվել՝ չի իրականացվել չափագրում, չի հիմնավորվել, թե արդյոք այդ տարածքը շահագործվել է հանրային սննդի կազմակերպման համար, թե ոչ: Հարկային տեսուչներն անտեսել են գանգատարբերի տրված բացատրություններն այն մասին, որ 01.06.2015 թ.-ից Ա/Ձ Դավիթ Առաքելյանը 2-րդ հարկի փոխարեն հանրային սննդի կազմակերպման գործունեությունն իրականացնում է 3-րդ հարկում (բացօթյա սրահում, որը բացվել է 01.06.2015 թ-ից): Այսինքն, չկա նաև ժամանակահատվածի որոշման անհնարինության դեպք, քանի որ եղանակային պայմանները հաշվի առնելով անհնար է բացօթյան գործունեություն իրականացնել 3-րդ հարկում:

Ա/Ձ Դավիթ Առաքելյանը 2-րդ հարկում գործունեություն չի իրականացրել, քանի որ 01.06.2015 թ-ից հանրային սննդի գործունեությունն իրականացվում է միայն 3-րդ հարկում:

Ելնելով վերոգրյալից՝ Ա/Ձ Դավիթ Առաքելյանը խնդրում է առոչինչ ճանաչել ՀՀ ՖՆ Նոր Նորքի ՀՏ 23.06.2015 թ-ի թիվ 5103808 ակտը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ֆինանսների նախարարի 08.06.2015 թ-ի թիվ 5103808 հանձնարարագրի համաձայն Ա/Ձ Դավիթ Առաքելյանի մոտ իրականացվել է օրենքով սահմանված ելակետային տվյալների գործակիցների ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Նոր Նորքի ՀՏ 23.06.2015 թ-ի թիվ 5103808 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 681.406 դրամ:

Ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ Ա/Ձ Դավիթ Առաքելյանը ք.Երևան, Բ.Մուրադյան 54/1 հասցեում իրականացնում է գործունեություն հանրային սննդի ոլորտում 105 ք.մ. մակերեսով, որի արտոնագրային վճարը կազմում է 211.050

դրամ, սակայն Նոր Նորքի ՀՏ ներկայացված արտոնագրային վճար վճարող համարվելու մասին թիվ 1 ձևով սահմանված հայտարարությունում ելակետային տվյալի մեծությունը նշվել է 48 ք.մ., որի արտոնագրային վճարը կազմում է 75000 դրամ: Նշված խախտման հետևանքով համաձայն «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հավելվածի 9-րդ հոդվածի հաշվարկվել է ամսական լրացուցիչ բյուջե վճարման արտոնագրային վճար՝ գումարով 136050 դրամ:

Հիմք ընդունելով «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ կետի, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ և 25-րդ հոդվածների դրույթները արտոնագրային վճարների գծով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 681.406 դրամ:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ֆինանսների նախարարի 08.06.2015 թ-ի թիվ 5103808 հանձնարարագրի համաձայն փաստացի ստուգումն իրականացվել է հարկային տեսուչներ Ա.Մոսյանի, Ա.Ալեքսանյանի և Հ.Հարությունյանի կողմից: Վերջիններիս կողմից կազմվել է Ակտի նախագիծ, որի վերաբերյալ Ա/Ձ Դավիթ Առաքելյանը ներկայացրել է առարկություններ: Այնուհետև, ՀՀ ֆինանսների նախարարի 16.06.2015 թ-ի թիվ 1259 հրամանով վերոգրյալ անձանց փոխարեն ստուգմանն ընդգրկվել են հարկային տեսուչներ Հ.Հակոբյանը, Գ.Խաչատրյանը և Գ.Խաչատրյանը, որոնց կողմից կազմվել է Ակտը:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ Ա/Ձ Դավիթ Առաքելյանը հանրային սննդի գործունեությունն իրականացնում է ք.Երևան, Բ.Մուրադյան 54/1 հասցեում գտնվող շենքի 2-րդ և 3-րդ հարկերում գտնվող տարածքների միջոցով, որոնց ընդհանուր մակերեսը կազմում է 105 ք.մ.:

Չնայած նրան, որ ՀՀ ֆինանսների նախարարի 08.06.2015 թ-ի թիվ 5103808 հանձնարարագրում ընդգրկված անձինք ստուգման ընթացքում արձանագրել են Ա/Ձ Դավիթ Առաքելյանի կողմից հանրային սննդի գործունեությունը 105 ք.մ. մակերես ունեցող տարածքում կազմակերպելու փաստը, սակայն սույն գործում առկա չեն համապատասխան ապացույցներ, որոնք կհիմնավորեին այդ հանգամանքը:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է՝ ...

բ) վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում»:

Քննարկվող դեպքում Ակտի կազմման պայմաններում Ա/Ձ Դավիթ Առաքելյանի համար առկա են ոչ բարենպաստ փաստական հանգամանքներ: Այսինքն, ստուգման ակտի 1-ին կետով արձանագրված խախտման ապացուցման պարտականությունը կրում է ստուգող մարմինը՝ ի դեմս ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց: Սակայն Ա/Ձ Դավիթ Առաքելյանի կողմից գործունեությունը 105 ք.մ. մակերես ունեցող տարածքում կազմակերպելու վերաբերյալ որևէ հիմնավոր ապացույց սույն գործում առկա չէ:

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ ստուգման ընթացքում արձանագրվել է, որ Ա/Ձ Դավիթ Առաքելյանի կողմից հանրային սննդի գործունեությունն իրականացվում էր վերոգրյալ հասցեում գտնվող շենքի 3-րդ հարկում գտնվող բացօթյա տարածքի միջոցով, որի մակերեսը կազմում է 57 ք.մ.: Ընդ որում, շենքի 3-րդ հարկում գտնվող բացօթյա տարածքի մակերեսը 57 ք.մ. կազմելու փաստը ընդունվել է նաև Ա/Ձ Դավիթ

Առաքելյանի կողմից, Ակտի նախագծի վերաբերյալ ներկայացված առարկություններում:

Ելնելով վերոգրյալ փաստական հանգամանքներից, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ա/Ձ Դավիթ Առաքելյանի կողմից ներկայացված արտոնագրային վճար վճարող համարվելու մասին հայտարարությունում ելակետային տվյալի մեծությունը նշվել է 48 ք.մ., Հանձնաժողովը գտնում է, որ Ակտով առաջադրված պարտավորությունները ենթակա են վերահաշվարկման (նվազեցման), հանրային սննդի գործունեության մակերեսը հիմք ընդունելով 57 ք.մ.:


Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

ՀՀ ՖՆ Նոր Նորքի հարկային տեսչությանը.

Կատարել ՀՀ ՖՆ Նոր Նորքի ՀՏ 23.06.2015 թ-ի թիվ 5103808 ակտով առաջադրված պարտավորությունների վերահաշվարկ, հանրային սննդի գործունեության մակերեսը հիմք ընդունելով 57 ք.մ.:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ